




ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԵՄՅԵՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԻ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԵՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. Վ ԱԶԳԵՆ Ա.Ի ՕԵՄԱՆ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՆԳԵՍԸ

Այս օրը, 1955 թվականի հոկտեմբերի 2-ը Առավոտ է: Թափանցիկ, կապույտ երկինքը խոստանում է աշնանային պայծառ, արևոտ օր: Զգացվում է վաղորդյան զովաշունչ, թեթև, հաճելի քամին: Մեղմօրոք շնչում են վանքի բարդիները: Հնադարյան վանքի բակն ու գավիթը կամաց-կամաց լեցվում են հավատացյալ ուխտավորների խմբեր: Առավոտյան ժամերգությունը վերջացել է, մինչև ուխտավորների նորանոր բազմություններ բոլոր կողմերից հորդում են դեպի Ս. Էջմիածին:

Հայ ուխտավոր ժողովուրդը եկել է իր հոգու ամենանվիրական ուխտը՝ կատարելու, հոգեկան բավարարություն առնելու հարազատ, խանդավաթ մորից՝ Ս. Էջմիածնից և Մայր Տաճարի հինավուրց, սրբազան կամարների տակ մասնակից դառնալու ազգային միասնականության, համերաշխության մեծաշուք խորհրդին ու հանդեսին՝ Ամենայն Հայոց նորընտիր Հայրապետի օծման սրբազան արարողությանը:

Մեծ է օրվա խորհուրդը և վեհ նրա ազգային-եկեղեցական նշանակությունը: Հայրապետական օծումը հայ հավատացյալ ժողովրդի սրտի ամենամոտ ազգային-եկեղեցական տոներից մեկն է եղել, որին նա մասնակցել է հոգեկան ուրախության վառ զգացմունքով:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի օծում—որքան բան են ասում հավատավոր հայ սրտին այս բառերը: Նրանք հայի սրբազան զգացմունքների հետ են խոսում, փոթորկում ու

թունդ հանում հայ ուխտավորի սիրտը հայրենասիրության անպատմելի հույզերով: Դարեր շարունակ հայ ժողովրդի ուրախության, վշտի ու արցունքի օրերին, հայ երանաշնորհ հայրապետները անձնվելու անշահախնդիր սիրով ու նվիրումով առաջնորդել են հայ ժողովրդի ազգային-եկեղեցական կյանքը՝ բարձր պահել նրա դպրությունը, լեղում, ազգային նվիրական ավանդություններն ու սրբությունները: Ս. Լուսավորչի պատմական հայրապետական Գահը դարձրել է հայ ժողովրդի միասնության և ազգային-կրոնական արժանապատվությունը արտահայտող նվիրական խորհրդանիշը:


Ինչպիսի՞ պատկառելի, համբուրելի, մեծավաստակ հայրապետներ լին նստել Ս. Լուսավորչի հայրապետական այս Գահի վրա: Եվ ահա այսօր, ի շարս այդ նվիրական անունների, ավելանում է մի գեղեցիկ անուն ևս, որը հայ երկնակամարի վրա և Մայր Աթոռ Ս. Էջմիածնում վառ պիտի պատավոր հոգիներում մի անգամ ևս բոցավառի հայրենասիրության և եկեղեցասիրության սրբազան հուրը:

Վանքի դարձանակներից ներս մտնող ավտոմեքենաների շարկները ազդարարում են Ազգային-եկեղեցական ժողովի պատվիրակներին և հյուրերին ժամանումը Մայր Աթոռ Նրանցից շատերը եկել են Ս. Էջմիածին, Հայրենիք, կտրելով հազարավոր կիլոմետրեր, օվկիանոսներ ու ցամաքներ, հեռավոր Ամերիկաներից, Միջերկրականի գեղեցիկ ա-

փերից, Եվրոպայից, Նեղոսի հովտից, արևա-
վառ Հնդկաստանից:

Աշխարհի բոլոր ծայրերից եկել են նրանք,
բերելով իրենց հետ բլուր կարոտներ, համ-
բույրներ: Սփյուռքի հայ մարդու հայրենա-
սիրական տենչերով ու երազներով բարա-
խող սրտերն են բերել նրանք ի տես Հայրե-
նի հարազատ հողի, ժողովրդի և Մայր Ա-
թոռ Ս. Էջմիածնի հազարամյա սրբություն-
ների:

Ինչ են խաչակիր, խաչվառակիր ու կերո-
նակիր դպիրները, սարկավազները, քահա-
նաները, վարդապետները, եպիսկոպոսներն
ու արքեպիսկոպոսները, բոլորն էլ տոնական
ու հանդիսավոր զգեստավորված: Չորս
պատվավոր ազգայինների հպարտությամբ
տանում են հայրապետական դեղնեցիկ ամպ-
հովանին, որի տակ գալիս է նորընտիր
Հայրապետը խոհուն, մտազբաղ, բայց կո-
րովի և երիտասարդ: Առջևից երկու զգես-



Նորընտիր հայրապետը քափորով առաջնորդվում է Տաճար

Ցերեկվա ժամը 11-ն է: Մայր Տաճարի
դանգերը ազդարարում են հանդիսավոր օր-
վա սրբազան արարողությունների սկիզբը:
Մայր Տաճարում, բակում, շրջակայքում ալե-
կոծվում է ժողովրդի բազմությունը...:

Վեհարանում, հայրապետական շքով
զգեստավորված է նորընտիր Հայրապետը:
Տոնականորեն ու պատշաճությամբ զգես-
տավորված են նաև եպիսկոպոսները, վար-
դապետներն ու քահանաները: Հանդիսավոր,
մեծահանդես թափորը սկիզբ է առնում: Թա-
փորի մի ծայրը արդեն Տաճարի դռանն է
մոտենում, իսկ մյուս ծայրը դեռ նոր է կազ-
մրվում: Առջևից ընթանում են կարմրա-
զգեստ շաթիրները, տոնական ու զվարթ:
Նրանց հետևում են ջահակիրները, ապա գա-

տավորված վարդապետներ տանում են հայ-
րապետական իշխանությունը խորհրդանշող
դրոշակակիր խաչն ու գավազանը: Հայրա-
պետի առջևից տարվում է նաև հայրապե-
տական ոսկեթել քողը, մինչ խնկարկում են
դույզ բուրվառակիր վարդապետները և նոր-
ընտիր Հայրապետը իր հայրապետական
օրհնությունն է տալիս շքերթի ճանապարհի
վրա հավաքված բազմահազար բազմություն:

Հայրապետական մեծաշուք թափորը
շարժվում է առաջ: «Հրաշափառ Աստուած»
շարականի հաղթական հնչյունները թնդա-
նում են Վեհարանի հինավուրց կամարները,
բակը, շրջակայքը և աշնանային պայծառ
արևի տակ տարածվում են Արարատյան
դաշտով մեկ, դեպի հեռուները...: Մայր Տա-



Վեհափառ Հայրապետը ծնրադիր աղօթելիս

ճարի դանդերը դողանջում են զվարթ և այդ ուրախ հնչյունների միջից լսվում են Մայր Աթոռի հավերժության, անշարժության քաղցրալուր մեղեդիները:

Նկեղեցական թափորը համընթաց մտնում է Տաճարից ներս: Թնդում է «Ուրախ լեր սուրբ եկեղեցի» շարականը, որը բերկրանքի և խնդության հույզեր, խորը ապրումներ է առաջ բերում հավատացյալների սրտերում: Ուրախ է այսօր մանավանդ Հայաստանյայց

Հայրապետական առաջին հանդիսավոր սուրբ պատարագը պիտի պաշտվի Ավագ Սեղանի վրա: Հայրապետին պաշտարկում են արքեպիսկոպոսներն ու եպիսկոպոսները:

Օծման արարողությունը կատարելու համար սուրբ սեղան են բարձրացել նզդատուի թեմի առաջնորդ Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանը, Հյուսիսային Ամերիկայի Արեւիկյան թեմի առաջնորդ Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանը, Հարավային Ամերիկա-



Վեհափառ Հայրապետը ձեռնադրության պահին

Առաքելական եկեղեցին, ցնծության վեհագույն զգացումն է ապրում նա, որովհետեւ Գեորգ Զ. հայրենասեր Հայրապետի մահով աշրիացյալ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը վերստին պիտի նորոգվի այսօր իր նոր Հովհաննիս օծմամբ:

Իջման Ս. Սեղանի առջև վերացած, վեհափառը աղոթում է Հայ եկեղեցու անշարժության, Հայրենիքի հզորության և հայ հավատացյալ ժողովրդի պայծառ ապագայի համար: Լուսեղեն այդ խորանների առաջ ծնրադրել են մեր բոլոր մեծ հայրապետները. «Ուխտս դի՛ք և կատարեցե՛ք»: Ահա մի նոր ուխտ ևս այդ խորանների առաջ, նախնյաց ոգով և նվիրումով:

Ի թեմի Հայրապետական նվիրակ Սիոն եպիսկոպոս Մանուկյանը, Վարդան արքեպիսկոպոս Գալֆայանը (Կալիֆորնիա), Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ներկայացուցիչ և պատգամավոր Դերենիկ եպիսկոպոս Փռլատյանը, ներքին թեմերից՝ Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը, Սուրեն եպիսկոպոս Թորոսյանը և Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը: Ավագ Սեղանի առջև, բազկատարած, ծնրադիր աղոթում է Վեհափառ Հայրապետը:

Դասում երգում է քառածայն երգեցիկ խումբը: Նկեղեցական հրաժշտության հոգեթով քաղցրությունն ու օծությունը այդ պահին լցնում է հինավուրց Տաճարը: Երգի,



Վեհափառ հայրապետական բողոք

շարականի, աղոթքի հնչյունների հետ, արծաթե բուրվառից, կարծես հայ հավատացյալ սրտերից բարձրանում է կնդրուկի անուշահոտ կապտավուն մշուշը, և ամեն ինչ, Տաճար և ուխտավոր, պարուրվում է այդ մշուշի մեջ, բարձրանում, վեհանում. «Աստուած խօսեցաւ ի բարձանցս»:

Ամենուր տոնական, դվարթ ու վառ հմայքով լեցուն է այսօր Վերանորոգված իր շքեղութեան մեջ փայլող Տաճարի դարավոր

Օծմանը ներկա են նաև Ռուսական Ուղղափառ Եկեղեցու պատգամավորութիւնը հանձինս Մինսկի և Բելոռուսիայի միտրոպոլիտ Պիտիրիմի ու Պսկովի և Պորխովի եպիսկոպոս Իոաննի և Վրացական Ուղղափառ Եկեղեցու պատգամավորութիւնը, որի կազմում են Բաթումի-Շեմոկմեդիի և Չկոնդիդիի միտրոպոլիտ Եփրեմը, Թբիլիսիի Սիոնի Մայր Տաճարի ավագ քահանա Ալեքսանդր Լուկիշ Գաբունիան և Քութայիսի Մծվանեկվիլիի



Վեհափառ Հայրապետը կարդում է իր երգումը

Նկարագրող կամարներից, փայլող ջահերից ու խորաններից աղոթքի, լույսի և խանդավառ բերկրանքի վարարուն բլուր հեղեղներ են հորդում հավատավոր հոգիներից ներս:

Տաճարում իրենց տեղերն են գրավել հոգևորականները, Աղգային-եկեղեցական ժողովի հոգևորական և աշխարհիկ պատգամավորները, հյուրեր և ուխտավորներ ԱՄՆ-ից, Հարավային Ամերիկայից, Պաղեստինից, Անգլիայից, Իտալիայից, Եգիպտոսից, Լիբանանից, Սիրիայից, Հնդկաստանից, Ռումինիայից, Բուլղարիայից և աշխարհի այլ երկրներից, ինչպես նաև Հայաստանի քաղաքներից, գյուղերից, հարևան հանրապետություններից:

Հրեշտակապետաց եկեղեցու ավագ քահանա Նաում Գրիգորեիչ Շավիանիձեն:

Առջևի շարքերում են ՍՍՌՄ Մինիստրների Սովետին կից կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի նախագահ Ի. Վ. Պոլյանսկին և Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Հրաչյա Գրիգորյանը:

Օծմանը ներկա են նաև Վարապետը՝ Ավետիք Իսահակյանը, Մարտիրոս Սարյանը, Ստեփան Ջորյանը, Հակոբ Կոջոյանը, գիտություն, արվեստի և գրականության բաղմաթիվ ներկայացուցիչներ:

Հայրապետական սուրբ պատարագը շարունակվում է վեհաժողովում և հանդիսավորությամբ մինչև ճաշու Ավետարանը:



Վեհափառ Հայրապետը կաթողիկոսական ամսնովանու տակ

Հայրապետական ձեռնարկության հոգև-
ղմալլ պահն է աշխմ: Ավագ սեղանի առաջ
նորից ծնրադրել է Վեհափառը, որի երկու
կողմերից շարվել են հանդիսավոր եպիսկո-
պոսները, որոնք տուն առ տուն սաղմոս են
քաղում: Ապա թնդում է եպիսկոպոսների
«Աստուածային և երկնային շնորհ» օրհներ-
դը, որից հետո բոլոր եպիսկոպոսները դնե-
լով ձեռքերը Հայրապետի գլխին, միաբերան
կարդում են «Մեք դնեմք զձեռս ի վերայ
սորա և դուք ամենեքեան աղօթս արարէք»
աղոթքը, այնուհետև կարդացվում են համա-
պատասխան մարդարեանական, ավետարանա-
կան և առաքելական ընթերցվածները, իսկ
հետո Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապե-
տը կարդում է հայրապետական սրբազան
երգումը, հավատարիմ մնալու Հայ եկեղե-
ցուն, Հայրենիքին և ժողովրդին:

Դարեր շարունակ հայոց հայրապետները
խորին երկյուղածությամբ տվել են իրենց
սրբազան երգումը՝ «Լինել Հայրենիքի. հետ,
ժողովրդի համար», «Հանուն Հայ եկեղեցու
նվիրակնության և նրա սրբազան իրա-
վունքների անխաբար պահպանման»:

Այսօր էս, պատմական այս սրբազան պա-
հին, մեծագույն պատասխանատվության և
անձնավորության զգացումով տվեց իր հայրա-
պետական երգումը Վեհափառ Վազգեն Ա.ը:
Նրա խոհուն և իմաստուն հայացքը արտա-
հայտում էր այդ պահին վճռականություն և
հաստատամտություն՝ մինչև վերջ տանելու
իր ստանձնած ծանր ու պատասխանատու
պաշտոնը ի փառս Հայաստանյայց Առաքե-
լական եկեղեցու և ի պայծառություն Մայր
Աթոռ Ս. Էջմիածնի:

Հայրապետական երգման արարողությու-
նից հետո Վեհափառը բարձրանում է տեղից
և սուրբ պատարագը շարունակվում է մինչև
«Ողջոյն»ը:

Այժմ հայրապետական օծման սրբազան
ժամն է: Ամենայն Հայոց նորընտիր Հայրա-
պետը գլխաբայց ծնրադրել է նորից Ավագ
Սեղանի առաջ և բաղկատարած աղոթում է:
Եպիսկոպոսները, զգեստավորված և օծա-
ղուխ գավազանները ձեռքներին, բոլորել են
Հայրապետին: Խորհրդավոր, վեհ և անկրկե-
նելի է պահը:

Ողջ Տաճարը քարացել է ու խորհրդավոր
անդորրությունը պարուրել է բոլորին: Գերա-
շնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Միտուն-
յանը, որպես երիցագույն արքեպիսկոպոս,
ձեռքում բռնել է մեռնաթափ սուրբ աղավ-
նին: Ամբողջ տաճարով մեկ թնդում են «Ա-
ռաքելոյ աղանդոյ» օրհներգության քաղցրա-
հնչուն երևեցները: Սրբալույս Մեռնի ոսկե-
փայլ կաթիլները թափվում են աղոթող Հայ-
րապետի գագաթին, եպիսկոպոսները բոլորը
միասին իրենց բուքերը դնելով Հայրապետի

գագաթին, խաչանիշ նկարում են, «Օրհնեա-
ցի, օծցի և սրբեացի գագաթ Տ. Տ. Վազգեն Ա.
Կաթողիկոսիս, այս նշանաւ, սուրբ խաչիւ
և սուրբ Աւետարանաւ և Սրբալույս Մեռն-
նաւ և աւուրս շնորհիւ...»: Ապա հանդիսա-
վոր Մամբրե սրբազանը, որպես արարողա-
պետ, վերցնում է ավագ լուսարար Սահակ
Եպիսկոպոսից հայրապետական սպիտակ
քողը և այն զցում նորած Հայրապետի
գլխին, և հայրապետական կոնքերը կապելով
Հայրապետի դոտուց, նրան է հանձնում նաև
հայրապետական գավազանը: Մինչ այդ,
դպիրները դասից երգում են «Այսօր ուրա-
խացեալ ցնծան երկնից բազմութիւնք» և
«Որք արժանաւորեցայք զալ ի փառաբանու-
թիւն» շարականները: Ավագ Սեղանի վրա
տուն առ տուն սաղմոս են քաղում: Ս. Գրե-
րիի և Ավետարանների ընթերցմամբ վեր-
ջանում է հայրապետական օծման սրբազան
արարողությունը:

Սեղանից լսվում է «Ողջոյն տուք միմեանց
ի համբոյր սրբութեան»: Մեկ առ մեկ, ըստ
ավագության, մոտենում են եպիսկոպոսնե-
րը և համբուրում նորած Հայրապետի մեռն-
նած գագաթը և Ս. Աջը: Ծարունակվում է
սուրբ պատարագը, մինչ իրար հետևից
Սուրբ Սեղան են բարձրանում Մայր Աթոռի
միաբանության անդամները, պատգամավոր
կրոնական ներկայացուցիչները՝ համբուրե-
լու նորած Հայրապետի մեռնաբայցը գա-
գաթը և Ս. Աջը: Ս. Սեղան են բարձրանում
քույր եկեղեցիների կրոնական ներկայացու-
ցիչները:

Ռուսական Ուղղափառ եկեղեցու և Մոսկ-
վայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիի
անունից սրտագին ողջունով հանդես եկավ
Մինսկի և Բելոռուսիայի միտրոպոլիտ Պի-
տիրիմը: Վերջում նա Մոսկվայի և Համայն
Ռուսիո Պատրիարք Ալեքսիի անունից Վեհա-
փառ Հայրապետին մատուցեց թանկարժեք
պանակի:

Ողջունի սրտառու խոսքով հանդես եկավ
նաև Բաթումի-Շեմքմեդիի և Չկոնդիդիի
միտրոպոլիտ Եփրեմը: Վերջում նա Համայն
Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Մելքի-
սեդեկի անունից մատուցեց նորին Ս. Օծու-
թյան մի սրբապատկեր:

Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա.ը իր
ողջունի խոսքում ասում է հետևյալը.

«Որ մեծն է ի ձեզ, եղիցի իբրև
զկրտսերն, և առաջնորդն իբրև զսպա-
սաւորն»:

Մեր Տիրոջ և Փրկչի խոսքերն են.
սիրելի հավատացյալ եղբայրներ և
ույրեր, արտասանված վերջին ընթ-
րիքին, որմե հետո Ողջին Աստուծո, Իր
խաչը ուսին առած, անտրտունջ դեպի
Գողգոթա բարձրացավ, զեպի բար-

ծունեք տառապանքի, զոհաբերումի և հաղթանակի: Հոգևոր տիեզերքի մեջ Գողգոթան ամենաբարձր կատարն է, վասնզի ան բարձունքն է փրկության: Եվ այդ՝ փրկության «հանապարհ բարք»ն և «առաջնորդ» հոգուց մերոյ յերկրէ ի յերկինս», ինքը աստվածա՝նա՛մ Տերն մեր Հիսուս, Իր ամբողջ կյանքի գործերով, մինչև ի մահ, մարդկանց մեջ ապրեցավ, բարոյեց և գործեց «իբրև գերտեսն» և եղավ «իբրև զապաստան»:

Այսօր, այս աղոթքի և հրաշքի խորհրդավոր պահուն, ես կուխտեմ հետևիլ մեր հավիտենական Տիրոջ և Առաջնորդ Աստվածորդւոյն պատվիրանին, ծառայելով Իր Սուրբ Եկեղեցւոյն, աստվածակառույց Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, մեր հարազատ ժողովուրդին և մեր վերընձնուղած Մայր Հողին:

Հրաշքով է հորինված Հայաստանյայց Ս. Եկեղեցին, հրաշքով է փրկված մեր ժողովուրդը մահվան անդունդներէն, հրաշքով, վերստին կյանքի է կոչված մեր հայրենի աշխարհը այսօր:

Ամրացուր զիս, Տե՛ր, որպէսզի Քու ձեռքիդ գործիքը դառնամ վասն շինության Սրբո Եկեղեցւոյս, Քու խոսքիդ ավետաբերը ըլլամ մեր հավատացյալ և հուսացյալ ժողովուրդին մեջ, ու նաև Քու խաղաղության ուխտյալ զինվորը դառնամ, որպէսզի մեր վերաշինված հայրենի օջախը այլևս երբեք, երբե՛ք չհանգրվի և անոր երդիկին տակ միշտ առատ ու անսպառ ըլլան հացը, լույսը և երգը:

Այս հանդիսավոր սրբազան պահուն, հոգևոր ուրախություն ու խոր մխիթարություն է մեզ բոլորիս համար, մեր հայ եղբայրության մեջ տեսնել, այս Միածնաւէջ Սուրբ Տաճարին հազարամյա կամարներուն տակ՝ բարձրապատիվ ներկայացուցիչները Ռուսաց Պապական Սուրբ Եկեղեցւոյ՝ գերաշնորհ պատգամաբերները Նորին Սրբութւոն Ալեքսի Պատրիարքին Համայն Ռուսիո և անոնց հետ միասին գերաշնորհ ներկայացուցիչները Վրացական Պապական Սուրբ Եկեղեցւոյ Կաթողիկոս՝ Նորին Սրբութւոն Մելքիսեդեկին:

Մենք և մեր ամբողջ Եկեղեցին երբեք պիտի չխոնձանք անոնց եղբայրական սրտաբոխ ողբոյնի և բարձր գնահատանքի խոսքերը՝ ողոյսալ մեր երանաշնորհ Հայրապետ Տ. Տ. Գեորգ

Չ. հանգուցյալ Կաթողիկոսի հիշատակին և մեր Սուրբ Եկեղեցւոյն:

Հայաստանյայց Եկեղեցին, ինչպէս մինչ այժմ, նաև հետ այսու ինքզինքը պիտի զգա մեկ սիրտ և մեկ մարմին Պապական Բոյր Եկեղեցիներուն հետ, իբրև նշմարիտ և կենդանի անդամներ մեր Տիրոջ՝ Քրիստոսի անտեսանելի մարմնույն: Աղոթակից ու գործակից պիտի ըլլանք անոնց հետ՝ ի խրեզդիր խաղաղ զարգացման և լուսաշող բարօրության մեր նվիրական Հայրենիքին, սովետական ժողովուրդներու մեծ և անխորտակելի եղբայրության: Թող Տերը ամբողջ և անխոռով պահե եղբայրությունը մեր:

Մունկի եկած և հայացքս սեռած դեպի երկինք, շնորհաց և բարյաց Գահեն կհայցեմ աստվածային ողորմություն և կենսաւոր օրհնություն մեր հավատացյալ ժողովուրդին համար, հայ ժողովուրդի բոլոր զավակներուն համար անխտիր, որ կապրին Մայր Հայրենիքի հողին վրա և կամ ի սփյուռս աշխարհի:

«Թագաւոր երկնաւոր, զԵկեղեցի Բո անշարժ պահեա, և զերկրպագուս անուանդ Բոս պահեա՝ ի խաղաղութեան»:

«Ողորմութիւն Աստուծոյ, շնորհք, սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և հաղորդութիւն Սրբոյն Հոգւոյն եղիցին ընդ ձեզ ընդ ամենեսեանդ. ամէն»:

Այսօր սուրբ պատարագին առաջին անգամ հիշատակվում է Ամենայն Հայոց նորրոնտիր Հայրապետի Թանկագին անունը. «Ճպիտկոպոսապետին մերոյ և պատուական Հայրապետին Ամենայն Հայոց Տեառն Տեառն Վաղգենայ Սրբազնագոյն Կոթողիկոսի...»: Ցնծության, ուրախության, ազգային հպարտության զգացմունքի ալիքներ են անցնում հավատացյալների սրտերից: Սգի սև շղարշը խաղաղ վերացվել է Մայր Աթոռից, Թափուր չէ ալլեա Լուսավորչի Աթոռը. նախախնամողն Աստված հայ ժողովուրդին պարգևեց արժանընտիր նոր Գահակալ:

Հազար բերան՝ փա՛ռք Արարչին:

«Թո՛ղ հավետ պայծառ մնա Լուսավորչի անմար կանթեղը» — այլ խոսքերն են բոլորի բերանում:

Հայ հավատացյալի և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու մեծագույն հանդեսն է այսօր: Ուրախ են բոլորը այս արժանավոր ընտրությամբ:

Հայրապետական սուրբ պատարագը շարունակվում է մեծաշուք հանդիսությամբ:

Հավարտ սուրբ պատարագի, կազմվում է նորից եկեղեցական մեծ թափուր, որը նորած Հայրապետին առաջնորդում է Վեհաբան: Թափուրի երկու կողմերից ժողովրդի անանցանելի պատնեշն է: Բոլոր կողմերից ջերմեռանդ հավատացյալները ցանկանում են Վեհափառ Հայրապետի Ս. Աջը համբուրել, նրա առաջին օրհնությունը ստանալ:

«Կեցցե՛ նորընտիր Վեհափառը», «Երկա՛ր կյանք ու արև մեք Վեհափառին» — լսվում են ժողովրդի միջից խանդավառ բացազանություններ, մինչ Վեհափառը խաչակնքում է և օրհնում ժողովրդին: Թափուրը առաջ է անցնում, Վեհափառը արդեն Վեհաբանումն է, Մաղկյա դահլիճում, հայրապետական քողը երեսին: Առաջին անգամ լինելով նա բազմում է Կաթողիկոսական Գահին, նրա աջ ու ձախ կողմերում կանգնած են եպիսկոպոս-

ներն ու արքեպիսկոպոսները: Կանոնավոր հերթականությամբ, բերկրանքի ուրախառիթ ցնծությամբ մոտենում են հոգևորական և աշխարհիկ ներկայացուցիչները Վեհափառ Հայրապետին, համբուրում նրա Ս. Աջը, շնորհավորում նրա դահլիճավությունը, մինչդեռ «էջ Միածինն ի Հօրէ» հոգեցունց շարականի խրոխտ հնչյունները թնդացնում են դահլիճի նկարազարդ կամարները:

«Եկա՛յք շինեսցուք սուրբ զխորանն

Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի լուսոյ,

Հայաստան աշխարհի»:

Շատերը արտասվում են ուրախությունից: Վերջապես Լուսավորչի թափուր Գահը վերստին նորոգված է, նրա վրա բազմած է արժանընտիր Հայրապետը՝ Վեհափառ Վազգեն Ա. Կաթողիկոսը:

Փա՛ռք ամենակալին Աստուծո:

